ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/267

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.12.2020թ. թիվ 26/26-1/18720-2020 գրությամբ Ա/Ձ Սանասար Մուրադյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, հիմք ընդունելով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 06.10.2020թ. կայացրած թիվ ԵԴ/6125/02/18 որոշումը, ՀՀ պաշտպանության նախարարության 31.01.2018թ. թիվ ԴՎԱ/336 գրության հիման վրա 15.12.2020թ. թիվ 26/26-1/18720-2020 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Սանասար Մուրադյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. Ա/Ձ Սանասար Մուրադյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

Ա/Ձ Սանասար Մուրադյանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ա/Ձ Սանասար Մուրադյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/267 ընթացակարգի շրջանակներում 28.12.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 31.01.2018թ. թիվ ԴՎԱ/336 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Սանասար Մուրադյանի միջև 26.10.2017թ. կնքված թիվ ՀԲՄԱՊՁԲ-7/5-3 ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը, ՀՀ պաշտպանության նախարարությունը 2018թ. հունվարի 23-ից միակողմանի մասնակի լուծել վերը նշված պայմանագիրը՝ Վայոց Ձորի տարածաշրջան նոյեմբեր՝ 41500կգ, Կոտայքի տարածաշրջան հոկտեմբեր՝ 12500կգ, նոյեմբեր՝ 29288կգ, Գեղարքունիքի տարածաշրջան նոյեմբեր՝ 99770կգ (Կարտոֆիլ) մասով: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 25.01.2018թ. ուղարկվել է մասնակցի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/267 ընթացակարգի շրջանակներում 28.12.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/267 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/267 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն

հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Սանասար Մուրադյանի միջև 26.10.2017թ. կնքվել է թիվ ՀԲՄԱՊՁԲ-7/5-3 ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալը.

Հ/Հ	Մատակարարման տարածաշրջան	Չ/Մ	Միավորի գին	Մատակարարումն ըստ ամիսների		Ընդհանուր գումարը ՀՀ դրամ
				հոկտեմբեր	նոյեմբեր	
1	Գեղարքունիքի տարածաշրջանի զորամասեր	կգ	88		149500	13156000
2	Վայոց Ձորի տարածարջանի զորամասեր	կգ	89	41500	41500	7387000
3	Կոտայքի տարածարջանի զորամասեր	կգ	88	62250	62250	10956000

3. ՀՀ ԶՈՒ զորամասերի 2017-2018թթ. կարտոֆիլի թերի մատակարարումների վերաբերյալ ՀՀ ԶՈՒ թիկունքի պետի և ՀՀ ԶՈՒ ԹՎ պարենային ծառայության պետի կողմից 28.12.2017թ. դրությամբ կազմվել է տեղեկանք՝ թիվ ՀԲՄԱՊՁԲ-7/5-3 ծածկագրով պայմանագրի մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

Մատակարարման տարածաշրջաններ	Կարտոֆիլ								
	Ենթակա է մատակարարման			Մատակարարվել է			Տարբերությունը կազմում է		
	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Ընդամենը	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Ընդամենը	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Ընդամենը
Վայոց - Ձոր	41500	41500	83000	41500		41500		41500	41500
Կոտայք	62250	62250	124500	49750	32962	82712	12500	29288	41788
Գեղարքունիք		149500	149500		49730	49730		99770	99770
Ընդամենը	103750	253250	357000			173942	12500	170558	183058

4. Պատվիրատուն Ա/Ձ Սանասար Մուրադյանին ուղղված 24.01.2018թ. թիվ ԴՎԱ/260 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Սանասար Մուրադյանի միջև 26.10.2017թ. կնքված թիվ ՀԲՄԱՊՁԲ-7/5-3 ծածկագրով գնման պայմանագրի համաձայն՝ Ձեր ընկերությունը պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը

2017թ. հոկտեմբեր, նոյեմբեր ամիսների ընթացքում մատակարարել բանջարեղեն (Կարտոֆիլ):

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2018թ. հունվարի 23-ին՝ միակողմանի մասնակի լուծում է վերը նշված պայմանագիրը՝ Վայոց Ձորի տարածաշրջան նոյեմբեր՝ 41500կգ, Կոտայքի տարածաշրջան հոկտեմբեր՝ 12500կգ, նոյեմբեր՝ 29288կգ, Գեղարքունիքի տարածաշրջան նոյեմբեր՝99770կգ (կարտոֆիլ) մասով...»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 25.01.2018թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.12.2020թ. թիվ 26/26-1/18720-2020 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 31.01.2018թ. թիվ ԴՎԱ/336 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Սանասար Մուրադյանի միջև 26.10.2017թ. կնքվել է թիվ ՀԲՄԱՊՁԲ-7/5-3 ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալը.

Հ/Հ	Մատակարարման տարածաշրջան	Չ/Մ	Միավորի գին	Մատակարարումն ըստ ամիսների		Ընդհանուր գումարը ՀՀ դրամ
				հոկտեմբեր	նոյեմբեր	
1	Գեղարքունիքի տարածաշրջանի զորամասեր	կգ	88		149500	13156000
2	Վայոց Ձորի տարածարջանի զորամասեր	կգ	89	41500	41500	7387000
3	Կոտայքի տարածարջանի զորամասեր	կգ	88	62250	62250	10956000

ՀՀ ԶՈՒ զորամասերի 2017-2018թթ. կարտոֆիլի թերի մատակարարումների վերաբերյալ ՀՀ ԶՈՒ թիկունքի պետի և ՀՀ ԶՈՒ ԹՎ պարենային ծառայության պետի կողմից 28.12.2017թ. դրությամբ կազմվել է տեղեկանք՝ թիվ ՀԲՄԱՊԶԲ-7/5-3 ծածկագրով պայմանագրի մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

Մատակարարման տարածաշրջաններ	Կարտոֆիլ								
	Ենթակա է մատակարարման			Մատակարարվել է			Տարբերությունը կազմում է		
	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Ընդամենը	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Ընդամենը	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Ընդամենը
Վայոց - Ձոր	41500	41500	83000	41500		41500		41500	41500
Կոտայք	62250	62250	124500	49750	32962	82712	12500	29288	41788
Գեղարքունիք		149500	149500		49730	49730		99770	99770
Ընդամենը	103750	253250	357000			173942	12500	170558	183058

Պատվիրատուն Ա/Ձ Սանասար Մուրադյանին ուղղված 24.01.2018թ. թիվ ԴՎԱ/260 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Սանասար Մուրադյանի միջև 26.10.2017թ. կնքված թիվ ՀԲՄԱՊԶԲ-7/5-3 ծածկագրով գնման պայմանագրի համաձայն՝ Ձեր ընկերությունը պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2017թ. հոկտեմբեր, նոյեմբեր ամիսների ընթացքում մատակարարել բանջարեղեն (Կարտոֆիլ):

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2018թ. հունվարի 23-ին՝ միակողմանի մասնակի լուծում է վերը նշված պայմանագիրը՝ Վայոց Ձորի տարածաշրջան նոյեմբեր՝ 41500կգ, Կոտայքի տարածաշրջան հոկտեմբեր՝ 12500կգ, նոյեմբեր՝ 29288կգ, Գեղարքունիքի տարածաշրջան նոյեմբեր՝99770կգ (կարտոֆիլ) մասով...»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 25.01.2018թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

Պատվիրատուն Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, 31.01.2018թ. թիվ ԴՎԱ/336 գրությամբ ուղարկել է լիազորված մարմին, որից հետո ՀՀ ֆինանսների նախարարությունը 02.02.2018թ. թիվ 03/26-3/1703-18 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Սանասար Մուրադյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այնուհետև՝ 29.03.2018 թվականին, ԱՁ Սանասար Մուրադյանը հայց է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ կնքված ՀԲՄԱՊԶԲ-7/5-3 ծածկագրով պայմանագիրը 23.01.2018

թվականին միակողմանի մասնակի լուծելու վերաբերյալ ՀՀ ՊՆ կողմից կայացրած որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 12.06.2018թ. թիվ ՍՑ-ԱՄ-2018/18 որոշմամբ Ա/Ձ Սանասար Մուրադյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԱՄ-2018/18 ընթացակարգը կասեցվել է մինչև գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 30.11.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարության 02.02.2018թ. թիվ 03/26-3/1703-18 գրությամբ Ա/Ձ Սանասար Մուրադյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԱՄ-2018/18 ընթացակարգը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մ. Անանյանի 12.06.2018թ. միջանկյալ որոշման համաձայն կասեցվել էր մինչև գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը՝ հիմք ընդունելով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ԵԴ/6125/02/18 քաղաքացիական գործով 01.06.2018թ. տրված կատարողական թերթի հիման վրա ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի կողմից թիվ 04252656 կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Խաչատրյանի վարույթում քննված Ա/Ձ Սանասար Մուրադյանի հայցն ընդդեմ ՀՀ ՊՆ՝ կնքված ՀԲՄԱՊՁԲ-7/5-3 ծածկագրով պայմանագիրը 23.01.2018թ. միակողմանի մասնակի լուծելու վերաբերյալ ՀՀ ՊՆ կողմից կայացրած որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին Դատարանի՝ 06.10.2020 թվականի թիվ ԵԴ/6125/02/18 վճռով կարճվել է՝ հայցվորի կողմից հայցից հրաժարվելու հիմքով:

Նշված վճռի եզրափակիչ մասի 2-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 07.04.2018թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պետք է պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը, այնուհետև վճռի օրինական ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո վերացնել:

Հիշյալ վճիռն օրինական ուժի մեջ է մտել 09.11.2020 թվականին, որից ելնելով կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնելու վերաբերյալ ՀՀ պաշտպանության

նախարարության կողմից գործը քննող դատավորին 24.11.2020թ. ուղարկվել է համապատասխան գրություն»:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ***ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>10 օրից ավելի</u>,***

Այսպիսով՝ Ա/Ձ Սանասար Մուրադյանը իր և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 26.10.2017թ. կնքված Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարման ժամկետը խախտել է 10 օրից ավելի, ինչի արդյունքում Մասնակիցը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ Մասնակիցը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ա/Ձ Սանասար Մուրադյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.12.2020թ. թիվ 26/26-1/18720-2020 գրությամբ Ա/Ձ Սանասար Մուրադյանին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Սանասար Մուրադյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված

բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**